

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

2013թ. նոյեմբերի 9-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 26-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2012-2013 ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2013-2014 ուստարվա զարգացման հայեցակարգը:

/ զեկ՝ ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյան /

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2013-2014 ուստարվա զարգացման հայեցակարգը:

/ զեկ՝ ՏՖ դեկան Ս.Ամիրխանյան /

3. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանը: Նա հանգամանորեն ներկայացրեց ֆակուլտետում հաշվետու ժամանակաշրջանում իրականացված աշխատանքներին, անդրադարձավ առաջադիմության, կարգապահության, կազմակերպված միջոցառումների, կիսամյակային և ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցերին՝ բերելով համապատասխան թվական տվյալներ: Հաջողությամբ իրագործվել են տարեկան հայեցակարգային դրույթները: Նա նաև նշեց, որ եղել են թերություններ և բացթողումներ, որոնք ընթացքում շտկվել են: 2013-2014 ուստարվա հայեցակարգով նախատեսվել են աշխատանքներ ուսումնական, գիտահետազոտական, միջամբիոնային, միջֆակուլտետային, համահամալսարանական ուղղվածությամբ:

Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանի հաշվետվությունը ևս ներկայացնում էր ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները: Մանրամասնորեն ներկայացնելով և վերլուծելով դրանք՝ զեկուցողն ընդգծեց ուսուցման գործընթացի, գիտահետազոտական, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը: Կարևորվեց տարբեր կարգի միջոցառումների դերը ուսանողների համակողմանի զարգացման մեջ: Ս.Ամիրխանյանը նշեց, որ 2013-2014 ուսումնական տարվա

զարգացման հայեցակարգում ներառված են այնպիսի միջոցառումներ, որոնք միտում ունեն բարձրացնելու հատկապես մասնագիտական կրթության որակը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի հարաճուն պահանջները:

Հաղորդումով հանդես եկավ պրոռեկտոր Ա.Ապրոյանը,որը նոյեմբերի 2-6-ը եղել է Գերմանիայում : ԳՊՀ ընթացիկ հարցերը ներկայացրեց ռեկտոր Ռ.Հակոբյանը:

Հիմք ընդունելով զեկուցումները՝

Որոշեցին՝

1.Հ. Ղաջոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Ս.Ամիրխանյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան